ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2023թ. թիվ 15-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի բ), գ), դ) կետերով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, Լոռու մարզի տարածքում 2023 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մինչև 2023 թվականի փետրվարի 10-ը Փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Լոռու մարզային փրկարարական վարչությանը տրամադրել ՀՀ պետական և համայնքային բյուջեներով ու այլ ծրագրերով 2023 թվականի ընթացքում համայնքի տարածքում նախատեսված աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

2) ձեռնարկել միջոցներ սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանով, ինչպես նաև 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովման ուղղությամբ և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 5-ը տրամադրել ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչությանը (lorimpv@mail.ru) էլեկտրոնային հասցեով:

3) Մինչև ս/թ փետրվարի 6-ը Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն թիվ 3 հավելվածի.

4) Մինչև ս/թ փետրվարի 6-ը Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առաջարկություններ 2023 թվականի հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից ՀՀ Լոռու մարզի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

3. ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

1) սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ստացված տեղեկատվության հիման վրա մշակել ՀՀ պետական և համայնքային բյուջեներով ու այլ ծրագրերով 2023 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզի տարածքում նախատեսված աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների պլան ու հսկողություն սահմանել պլանով նախատեսված միջոցառումների իրականացման նկատմամբ.

2) ամփոփել սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ստացված տեղեկատվությունը և ներկայացնել ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նիստերին՝ քննարկման:

4. Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին՝

2023 թվականի ընթացքում պարբերաբար քննարկել «Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով» նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և կազմել տեղեկանքներ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության և Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետերի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

13/01/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հունվարի 13
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. հունվարի 13-ի
թիվ 15-Ա որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	*Միջոցառումների անվանումները*	*Կատարող*	*Կատարման ժամկետը*
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն	Համայնքների ղեկավարներ	Մինչև 15.03.2023թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մինչև 15.03.2023թ.
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայության պետ	Ամեն օր, սկսած 01.03.2023թ.
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ	Մինչև 15.03.2023թ.
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար:	Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ	Մինչև 15.03.2023թ.
8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Մինչև 15.03.2023թ.
9.	Ճշտել արտակարգ իրավիճակներում գործելու և զինվորական մարմինների հետ փոխհամագործակցությունների պլանները:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Մինչև 15.03.2023թ.

2. Հիմնական միջոցառումներ			
10.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Մշտապես
11.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշ-տության դեպքում
12.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքների ղեկավարներ	Անհրաժեշ-տության դեպքում
13.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Ըստ անհրաժեշ-տության
14.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշ-տության դեպքում
15.	Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի միջև:	Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինու-թյան բաժնի պետ	
16.	Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն:	«ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնա-ճյուղի տնօրեն	

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

13/01/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. հունվարի 13-ի
թիվ 15-Ա որոշման

Տեղեկատվություն

ՀՀ Լոռու մարզում ՀՀ պետական և համայնքային բյուջեներով ու այլ ծրագրերով տարվա ընթացքում պլանավորված կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ

ՀՀ ը/կ	Մարզի, համայնքի (բնակավայրի) անվանումը	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Ֆինանսավոր-ման աղբյուրը	Գումարի չափը (հազ. դրամ)	Պատասխանատու, կատարող (անուն, ազգանուն, հեռախոսահամար)	Նշումներ
1	2	3	4	5	6	7	8

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

13/01/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 3.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. հունվարի 13-ի
թիվ 15-Ա որոշման

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ

_____ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մասին

1. Վտանգի (աղետի) անվա-նումը(ները) - սելավ - հեղեղում - սողանք - քարաթափում - և այլն	
2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը)	
3. Առաջացման հնարավոր պատճառները	
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	
5. Կանխարգելիչ միջոցառումներն իրականացնելու համար առաջարկություններ	
6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2023թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը՝ ըստ միջոցառումների տեսակների	

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

13/01/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 4.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. հունվարի 13-ի
թիվ 15-Ա որոշման

2023թ. հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից
ՀՀ Լոռու մարզի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները,
գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով
անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ

Հ/Հ	Համայնքի (բնակավայրի) անվանումը	Աշխատանքների կատարման օբյեկտը	Անհրաժեշտ աշխատանքները և ծավալները	Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը
1	*2*	*3*	*4*	*5*
1.				
2.				
3.				
4.				

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

13/01/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ